ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

_Մանկավարժություն և հոգեբանություն_
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ _Լ.Գ.Բաղդասարյան_ /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № _17_

«_03_» _ապրիլ_ 2023_ թ.

ՄՀ/բ-189__ Սպորտային մանկավարժություն _____ ԴԱՍԸՆԹԱՑԻ
Դասիչ, դասընթացի անվանում

# ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** 011401.00.6 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 011401.09.6 **ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** ____ Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** **Մանկավարժության և հոգեբանության**
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** **հեռակա**__________
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** հեռակա **_4 կ, 8-րդ կիսամյակ**

**Դասախոս՝** __Անահիտ Հովհաննիսյան Վաչագանի
/անուն, ազգանուն/

**Էլ. հասցե՝** **Hovhannisyan_58@mail.ru**

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


| | | |
|---|---|---|
| 1. | Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում ……………………………… | 3 |
| 2. | Դասընթացի նպատակը և խնդիրները ………………………………… | 3 |
| 3. | Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները ……………………………… | 4 |
| 4. | Դասընթացի կրթական վերջնարդյունքները ……………………………… | 5 |
| 5. | Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների ……………………………………… | 8 |
| 6. | Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ……………………………………… | 9 |
| 7. | Ուսումնական աշխատանքների տեսակները ……………………………… | 9 |
| 8. | Դասավանդման մեթոդներ………………………………………………… | 10 |
| 9. | Ուսումնառության մեթոդները ……………………………………………… | 11 |
| 10. | Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը ……. | 11 |
| 11. | Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ………………… | 13 |
| 12. | Դասընթացի ուսումնամեթոդական քարտ………………………………… | 14 |
| | 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ | 14 |
| | 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ……………………………………… | 19 |
| | 12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ………………………………………………………………… | 00 |
| | 12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ ………. | 23 |
| 13. | Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում………………… | 25 |
| 14. | Գնահատում………………………………………………………………… | 25 |
| | 14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում…………………………………… | 26 |
| | 14.2. Հարցաշար……………………………………………………………… | 26 |
| | 14.3. Գնահատման չափանիշներ……………………………………………… | 30 |
| 15. | Դասընթացի համառոտ նկարագրիչ………………………………………… | 32 |

# ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## 1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

«Սպորտային մանկավարժություն» դասընթացը կարևորվում է «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության բնագավառում՝ մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է 011401.09.6 **ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ** կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում: Բարձրագույն մանկավարժական կրթության մասնագետների պատրաստության համակարգում կարևոր նշանակություն է ստանում ժամանակակից մանկավարժական գիտելիքների տիրապետման և գործնական կարողությունների ձևավորմանը նպատակաուղղված ուսուցման գործընթացը: Հատկապես, երբ այն կապված է աճող սերնդի և ազգաբնակչության առողջության, ինչպես նաև մարզիկների պատրաստության ողջ գործընթացի հետ: Հասարակական հարաբերությունների փոփոխման արդի փուլում առավել անհրաժեշտ է դառնում նորովի պարզաբանել մանկավարժական գիտության կառուցվածքը, առարկան, օբյեկտը, մշտական և ժամանակավոր խնդիրները, ուսուցման, դաստիարակության և կրթության բովանդակությունը, օրինաչափությունները, հայեցակարգերը:

«Սպորտային մանկավարժություն»– ծրագրային բաժնում պարզաբանվում են առարկայի ձևավորման, գիտահետազոտական մեթոդների հարցերը, հիմնական հասկացությունները, ներկայացվում են ֆիզիկական դաստիարակության և սպորտային գործունեության դաստիարակության համակարգը: Հատուկ ուշադրություն է դարձվում ֆիզիկական դաստիարակության և մարզական գործունեության գործընթացներում բարոյական դաստիարակության հարցերին: Ներկայացված են ընտանեկան ֆիզիկական դաստիարակության առանձնահատկությունները, առողջ ապրելակերպի բաղադրիչները, մանկավարժական հաղորդակցման գործառույթներն ու առանձնահատկությունները, սպորտային թիմի դաստիարակչական հնարավորությունները, ձևավորման փուլերը, թիմում առաջացող կոնֆլիկտները և դրանց լուծման մանկավարժական ուղիները:

## 2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

**2.1. Դասընթացի նպատակն է** ՝ Բացահայտել սպորտային մանկավարժական օրինաչափությունները, սպորտի մասնագետներին զինել այն գիտելիքներով որոնք

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

անհրաժեշտ են սպորտի պարապմունքներին մանկավարժահոգեբանական խնդիրներ լուծելու համար։

- ուսանողներին փոխանցել գիտելիքներ սաների և մարզիկների սպորտային մանկավարժահոգեբանական օրինաչափությունների զարգացման վերաբերյալ։
- ձևավորել հմտություններ և կարողություններ ուսանողների մոտ մարզիչի մասնագիտական-մանկավարժական դիտողականության, սպորտային մանկավարժական վարպետության հաղորդակցման մշակույթի վերաբերյալ։
- ուսանողների կողմից ձեռք բերել համեմատելու և վերլուծելու ունակություն սաների և մարզիկների տարիքային և անհատական զարգացման չափանիշների վերաբերյալ։
- ձևավորել ուսանողների հետազոտական շրջանակներում մասնագիտական տարբեր իրավիճակներում վերլուծելու կարողությունները։

**2.2. Դասընթացի խնդիրներն են.**

- Հաղորդել գիտելիքներ սպորտային մանկավարժահոգեբանական վարպետության տեսական հիմքերի վերաբերյալ,
- բարելավել ֆիզիկական զարգացման և ֆիզիկական պատրաստվածության ամբողջական անձի ձևավորումը,
- Ներկայացնել սպորտի, որպես մանկավարժական երևույթի հիմնական հասկացությունները։
- Ներկայացել մարզիչի և մարզիկի հաղորդակցման օրինաչափությունները։
- Ամրապնդել ուսանողների կողմից դաստիարակության սկզբունքների և մեթոդների օգտագործման յուրօրինակությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտային դաստիարակության մեջ՝ ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով։
- Սովորեցնել ուսանողներին կատարել սաների և մարզիկների բարձր նվաճումներ ապահովող սպորտային մանկավարժահոգեբանական որակների հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների։
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել սաների և մարզիկների տարիքային և անհատական այն առանձնահատկությունները շարժողական ընդունակությունների կատարելագործման շնորհիվ, որոնք կապահովեն

բարձր նվաճումների ձեռք բերումը:

- Բարձրացնել սաների հոգեբանական պատրաստվածություն-ը

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները ապահովում են** հետևյալ դասընթացները՝ «Ընդհանուր մանկավարժություն», «Ընդհանուր հոգեբանություն», «Տարիքային ֆիզիոլոգիա», «Ֆիզիկական դաստիարակության դասավանդման մեթոդիկան դպրոցում», «Տարիքային մանկավարժություն և հոգեբանություն» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների մանկավարժահոգեբանական և մասնագիտական գիտելիքների, մասնագիտական հմտությունների առկայությունը:

**Սպորտային մանկավարժության հիմք են հանդիսանում.**

- Բնություն և հասարակական զարգացման ընդհանուր օրինաչափություններն ուսումնասիրող գիտությունները՝ փիլիսոփայություն, պատմություն, էթիկա և այլն:
- ՈՒսուցման, դաստիարակության և զարգացման օրինաչափություններն ուսումնասիրող գիտություններ՝ *մանկավարժություն, հոգեբանություն, մարդաբանություն*
- Մարդու զարգացման և ձևավորման կենսաբանական օրինաչափություններն ուսումնասիրող գիտություններ՝ կենսաբանություն, անատոմիա, գենետիկա, ֆիզիոլոգիա, բիոքիմիա և այլն:
- Ինքնուրույն գիտաժյուղ հանդիսացող դասընթացներ՝ որպես ուսումնասիրման օբյեկտ ընտրել են սպորտի խնդիրները՝ ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պատմություն, սպորտի հոգեբանություն և այլն:

4. **Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունքները**

**«Սպորտային մանկավարժություն»** դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

**ԻՄԱՆԱ.**

- Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության տեսակները,
- ուսուցման և դաստիարակության գործընթացի, ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի մանկավարժական վարպետության հետ կապված համապատասխան գիտելիքները և գործնական կարողությունները,
- Սպորտի, որպես մանկավարժական երևույթի հիմնական հասկացությունները
- Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության իրականացման փուլերը ուսումնա-դաստիարակչական գործընթացում,
- Սպորտի մանկավարժի գործունեության ֆունկցիոնալ տարրերը,
- անձի ձևավորման, նրա ազատության, կյանքի ապահովման պատասխանատվության պայմանները,
- Մարզիչի մանկավարժական տեխնիկան
- անհատ մարդուն և մարդկանց խմբերի կազմակերպման և կառավարման հոգեբանամանկավարժական միջոցները, մեթոդներն ու ձևերը,
- բնակչության ֆիզիկական դաստիարակության սկզբունքներն ու մեթոդները:

**ԿԱՐՈՂԱՆԱ.**

- ձեռք բերած տեսական գիտելիքները՝ խոսքի տիրապետման և հաղորդակցման մշակույթը կիրառել գործնականում,
- համեմատել բարձրագույն նվաճումների սպորտի պարապմունքների կառուցման և անցկացման տարբերությունը մասսայական սպորտի համեմատությամբ,
- սպորտային դաստիարակության ոլորտում որոշել ընդհանուր և կոնկրետ նպատակներն ու խնդիրները,
- որոշել և փաստարկված ներկայացնել անձնական վերաբերմունքը մանկավարժության բանավեճային խնդիրներին, կատարել ինքնուրույն եզրահանգումներ:

**ՏԻՐԱՊԵՏԻ.**

- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հաջողությունների ոլորտում ինֆորմացիայի հավաքման, ընդհանրացման, և օգտագործման մեթոդներին և միջոցներին,

- բազմամշակութային միջավայրի պայմաններում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործունեության սուբյեկտների հետ շփումներ հաստատելու և փոխգործունեություն ապահովելու ձևերին, հետազոտության մեթոդներին:
- ավանդական և ոչավանդական միջոցների, մանկավարժական դաստիարակչական մեթոդներին:
- Դաստիարակության խնդիրների իրագործման յուրօրինակությանը՝ բարոյական, աշխատանքային, մտավոր, գեղագիտական ուղղություններում:
- Մարզիչի մանկավարժական տեխնիկայի կարողություններին, մարզիկների մանկավարժական տեխնիկայի կարողությունների ձևավորման մոտեցումներին

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

**ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,

**ԳԿ2** կազմակերպելու և պլանավորելու ունակություն

**ԳԿ4** մասնագիտական ոլորտի գիտելիքների հիմունքներ,

**ԳԿ9** խնդիրների լուծում,

**ԳԿ10** որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

**ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,

**ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,

**ՀԳԿ6** առաջնորդի հատկություններ,

**ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն,

**ՀԳԿ10** նախաձեռնողականություն և ձեռներեցություն,

**ՀԳԿ11** որակի կարևորության գիտակցում,

**ՀԳԿ12** հաջողության ձգտում:

Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)

**ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,

ԱԿ6 կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,

ԱԿ7 ցուցաբերել ուսումնասիրման ոլորտում հետազոտությունների որակի իմացություն,

ԱԿ11 տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,

ԱԿ14 տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

Սպորտային մանկավարժի մասնագիտական **իրավասությունները՝ կոմպետենցիաներն են.**

- սպորտային կարողությունների և հմտությունների գումարի տիրապետումը՝ որպես մանկավարժական գիտակցության, որոշակի արժեքների, իդեալների կրողի,
- Մանկավարժական գործունեությունը, մարզիչի գործունեությունը, ռեկրեացիոն գործունեությունը,
- Կազմակերպչական կառավարչական գործունեությունը,
- Գիտա-հետազոտական գործունեությունը,
- Մշակութային լուսավորչական գործունեությունը:

**5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների[2].**

**«Սպորտային մանկավարժություն»** դասընթացից ձեռք բերված գիտելիքները և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել կրթական հաստատություններում որպես՝ 1. ֆիզիկական կուլտուրայի մանկավարժ, 2. ֆիտնեսի խորհրդատու, 3. ընտրված սպորտաձևի մարզիչ, 4. ֆիզիկական դաստիարակության ուսուցիչ, 5.բուհ-ում սպորտային և տեսական առարկաների դասավանդող, 6.շարժողական ապարատի վերականգնող, 7. ռեկրեացիա իրականացնող, 8. առողջ ապրելակերպ տարածող, 9. սպասարկման և տուրիզմի ոլորտների մասնագետ, 10. գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող, 11. մասնագիտական գործունեության ընթացքում կատարողական վարպետության մարզիչ, 12. սպորտի

---

[2] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

բնագավառի լաբորատորիաներում գիտահետազոտական աշխատանքներ իրականացնող, 13. ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և պրոֆեսիոնալ սպորտի բնագավառում գիտական հետազոտություններ կատարող:

## 6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարություն (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | | 3 կրեդիտ/90ժամ |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | | 8 |
| Գործնական աշխատանք | | - |
| Սեմինար պարապմունք | | 6 |
| Լաբորատոր աշխատանք | | - |
| Ինքնուրույն աշխատանք | | 76 |
| **Ընդամենը** | | 90 |
| Ստուգման ձևը ստուգարք | | ստուգարք |

7. **Ուսումնական աշխատանքների տեսակները**[3] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը

[3] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **<u>Սեմինար պարապմունքները</u>** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:
Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակության հարցադրումների և պատասխանների մասին:

- **<u>Ինքնուրույն աշխատանքը</u>** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:
Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[4]՝
    - <u>Ռեֆերատ</u> – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
    - <u>Կլոր սեղան</u> – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
    - <u>Կոնկրետ իրավիճակների վերլուծություն</u> – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
    - <u>Աշխատանքային տետր</u> – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
    - <u>Զեկույց</u> – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:
    - <u>Հարցազրույց</u> – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են**՝[5] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր….

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[5] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

9. **Ուսումնառության մեթոդներն են**[6]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում….

10. **Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների**[7]**.**

| հ/հ Մոդուլ | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | |
|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | լաբորատոր աշխատանք |
| 1. | «Ֆիզիկական կուլտուրա և սպորտի մանկավարժություն»-ը որպես գիտաուսումնական դասընթաց. օբյեկտը, առարկան և խնդիրները: Սպորտի, որպես մանկավարժական երևույթի հիմնական հասկացությունները | 2 | 2 | |
| 2. | Մարզիչի գործունեության յուրօրինակությունը, պրոֆեսիոգրամը:Մասնագետի մանկավարժական կոմպետենցիաները և չափորոշիչները: | 2 | 2 | |
| 3. | Դաստիարակության սկզբունքների և մեթոդների օգտագործման յուրօրինակությունը Սպորտային դաստիարակության մեթոդների կոնցեպցիան: | 2 | 2 | |
| 4. | Դաստիարակչական նպատակներն ու խնդիրները ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքների ժամանակ: | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ՝ 14 ժամ | | 8 | 6 | |

11. **Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ**

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

[7] Նման է օրացուցային պլանին

| Պարտադիր գրականություն (ՊԳ) | | |
|---|---|---|
| 1. | Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие, Екатеринбург, Издательство Уральского университета, | 2014,350 с. |
| 2. | Тер-Ованесян А.А., Тер-Ованесян И.А. Педагогика спорта. - Киев, | 1986. 185 с. |
| 3. | Сидоров А.А.,Иванюженков Б.В.,Карелин А.А.,Педагогика спорта, Учебник для студентов вузов,М.:Дрофа, | 2000, 320 с. |
| 4. | Основы педагогического мастерства: Учеб, пособие для 0-75 пед. спец. высш. учеб. заведенний/И. А. Зязюн, И. Ф. Кривонос, Н. Н. Тарасевич и др.; Под ред. И. А. Зязюна.— М.: Просвещение, | 1989.— 302 с. |
| 5. | В.Г. Крысько Психология и педагогика в схемах и таблицах, Минск, Харвест, | 1999, 376с. |
| Լրացուցիչ գրականություն(ԼԳ) | | |
| 1. | Բարայան Հ.Ա. Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը ֆիզիկական դաստիարակության գործընթացում | 1987,150 էջ |
| 2. | Деркач А©, Исаев А© Педагогическое мастерство тренера.- ФиС, | 1981,180 с. |
| Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ) | | |
| 1. | Էլեկտրոնային գրադարան, կաբինետ, Մանկավարժության և հոգեբանության ամբիոն, անձնական էլեկտրոնային գրադարան | |
| 2. | | |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

## 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[8] |
|---|---|---|---|---|
| 1. | «Ֆիզիկական կուլտուրա և սպորտի մանկավարժություն»-ը որպես գիտաուսումնական դասընթաց. օբյեկտը, առարկան և խնդիրները Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժության կապը այլ գիտությունների հետ: | Սպորտային մանկավարժության հիմքը Սպորտի, որպես մանկավարժական երևույթի հիմնական հասկացությունները: Բարձրագույն նվաճումների սպորտի պարապմունքների կառուցման և անցկացման տարբերությունը մասսայական սպորտի համեմատությամբ : <u>Հոգեբանական պատրաստվածության</u> էությունը <u>Դաստիարակությունը</u> մանկավարժական իմաստով: <u>Ուսուցում-ը</u> սպորտային դասընթացների գործընթացում: <u>Զարգացում-ը</u> բարձրագույն դպրոցի մանկավարժության մեջ դիտարկվում է որպես ուսումնական դասընթացների միջոցով ուսանողների մտավոր և ֆիզիկական գործունեության կատարելագործման նպատակասլաց, պլանավորված անընդմեջ գործընթաց: | 1 | Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие,2014 Тер-Ованесян А.А., Тер-Ованесян И.А. Педагогика спорта. - Киев,1986 |
| 2. | Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեությունը **Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում անձի գործունեության առանձնահատկությունները և մասնագետին ներկայացվող պահանջները:** | Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեությունը Մարզիչի մասնագիտական գործունեության տեսակները:Մարզիչի գործունեության ֆունկցիոնալ տարրերը: Ուսումնա-դաստիարակչական գործընթացում մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության իրականացման փուլերը Մարզիչի գործունեության յուրօրինակությունը, պրոֆեսիոգրամը: **Մարզիչի մասնագիտական գործունեության տեսակները** Սպորտի մանկավարժի գործունեության ֆունկցիոնալ տարրերը Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության իրականացման փուլերը ուսումնա-դաստիարակչական գործընթացում: Պրոֆեսիոգրամը ***1***.Մասնագետի մանկավարժական կոմպետենցիաները և չափորոշիչները: Դաստիարակության խնդիրների իրագործման յուրօրինակությունը՝ բարոյական, աշխատանքային, մտավոր, գեղագիտական ուղղություններում: **4**. Քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները սպորտում և ժամանակակից պայմաններում: | 1 | **1.** Сидоров А.А.,Иванюженков Б.В.,Карелин А.А.,Педагогика спорта, Учебник для студентов вузов ,М. :Дрофа,2000 ,320с. Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие, 2014: В.Г. Крысько Психология и педагогика в схемах и таблицах, Минск, Харвест,1999, 376с. |

[8] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | **Դաստիարակության սկզբունքների և մեթոդների օգտագործման յուրօրինա-կությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտային դաստիարակության մեջ:** | 2 Սպորտային դաստիարակության մեթոդների կոնցեպցիան: Համոզման, վարժությունների, խրախուսման, պարտադրանքի, օրինակի, մրցույթի / խաղի/, քննադատության /ինքնաքննադատության/ մեթոդների յուրօրինակությունը և կիրառման առանձնահատկությունները սպորտային դաստիարակության մեջ:Զննականության մեթոդի ապահովումը սպորտային մանկավարժության գործընթացում | 2 | Тер-Ованесян А.А., Тер-Ованесян И.А. |
| 4. | **Ինքնադաստիարակության առանձնահատկությունները սպորտում:** | Ինքնադաստիարակության առանձնահատկությունները սպորտում: Ինքնադաստիարակությունն ապահովող՝ պայմանները, սպորտային մանկավարժի դերը, ինքնավերահսկումը: | 2 | Педагогика спорта. - Киев,1986 В.Г. Крысько Психология и педагогика в схемах и таблицах, Минск, Харвест, 1999, 376с |

## 12.2. Սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|---|
| 1. | **Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեությունը** | Մարզիչի մասնագիտական գործունեության տեսակները: Մարզիչի գործունեության ֆունկցիոնալ տարրերը Ուսումնա-դաստիարակչական գործընթացում մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության իրականացման փուլերը:Մարզիչի գործունեության յուրօրինակությունը, պրոֆեսիոգրամը: | 2 | Մտագրոհ, մանկավարժական իրավիճակների քննարկում | Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие2010 |
| 2. | **Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում անձի գործունեության առանձնահատկություններ և մասնագետին ներկայացվող պահանջները:** | Մասնագետի մանկավարժական կոմպետենցիաները և չափորոշիչները: | 2 | Կլոր սեղան | Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие2010 |
| 3. | **Դաստիարակության** | 2 Սպորտային | 2. | Մտագրոհ, | Педагогика |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | **սկզբունքների և մեթոդների օգտագործման յուրօրինա-կությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտային դաստիարակության մեջ:** | դաստիարակության մեթոդների կոնցեպցիան: Համոզման, վարժությունների, խրախուսման, պարտադրանքի, օրինակի, մրցույթի / խաղի/, քննադատության /ինքնաքննադատության/ մեթոդների յուրօրինակությունը և կիրառման առանձնահատկությունները սպորտային դաստիարակության մեջ:Ջննականության մեթոդի ապահովումը սպորտային մանկավարժության գործընթացում | | մանկավար ժական իրավիճակն երի քննարկում | спорта. - Киев,1986 В.Г. Крысько Психология и педагогика в схемах и таблицах, Минск, Харвест, 1999, 37 |

## 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Ուսումնասիրվող հարցեր | Աշխատանքի տեսակը[10] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[11] |
|---|---|---|---|---|---|---|
| 1. | **Ֆիզիկական և սպորտային գործունեության դաստիարակչական ներուժը:** | Դաստիարակչական հնարավորություններն ու դրանց իրականացումը ֆիզիկական կուլտուրայում, մասսայական սպորտում, | Ռեֆերատ | հոկտեմբեր | Բանավոր ներկայացում | Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие2010 |

[10] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[11] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2. | Մարզիկների դաստիարակ վածության մակարդակի ախտորոշում ը և մանկավարժ ական աշխատանքի պլանավորմա ն պահանջները նրանց հետ: | Մարզիկների դաստիարակվածության մակարդակի ախտորոշման մեթոդիկաների, թեստերի ներկայացում՝ըստ մարզիկների տարիքային և անհատական առանձնահատկությունների | Կոնկր ետ իրավի ճակնե րի վերլու ծությո ւն | հոկտե մբեր | Կլոր սեղան | Тер-Ованесян А.А., Тер-Ованесян И.А. Педагогика спорта. - Киев, 1986. |
| 3. | **Ֆիզիկական և սպորտային գործունեության դաստիարակչակա ն ներուժը** | բազային սպորտում, բարձրագույն նվաճումների սպորտում, | Կոնկր ետ իրավի ճակնե րի վերլու ծությո ւն | հոկտե մբեր | Ռեֆերա տ | Тер-Ованесян А.А., Тер-Ованесян И.А. Педагогика спорта. - Киев, 1986. |
| 4. | Ինքնադաստիարա կության առանձնահատկու թյունները | վերականգնողական պարապմունքների, հաշմանդամների, սահմանափակ կարողությունների սպորտում: | Կլոր սեղան | հոկտե մբեր | Կլոր սեղան Անձնակ ան հետազո տության ներկայա ցում | Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие2010 |
| 5. | Սպորտային մանկավարժի մանկավարժ ական փոխգործունե ության յուրօրինակու թյունը սահմանափա կ հնարավորութ յուններվ երեխաների հետ: | Սպորտային մանկավարժի մանկավարժական փոխգործունեության յուրօրինակությունը ԿԱՊԿՈՒ երեխաների առանձնահատկությունների հաշվառմամբ | Ռեֆեր ատ | հոկտե մբեր | Բանավո ր ելույթ | Сидоров А.А.,Иванюженков Б.В.,Карелин А.А.,Педагогика спорта, Учебник для студентов вузов,М.: Дрофа, 2000,320с |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 6. | Սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող երեխաների հետ ֆիզկուլտ-սպորտային աշխատանքի յուրօրինակություն | Սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող երեխաների հետ ֆիզկուլտ-սպորտային աշխատանքի յուրօրինակությունը մանկատԱն, հատուկ դպրոցի երեխաների հետ և այլն): | Կլոր սեղան | հոկտեմբեր | քննարկում | Тер-Ованесян А.А., Тер-Ованесян И.А. Педагогика спорта. - Киев, 1986. |
| 7. | Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես այլընտրանք սոցիալապես անբարենպաստ գործոններին: | Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես այլընտրանք սոցիալապես անբարենպաստ գործոններին՝ ընտանեկան բռնություն, սոցիալական բարձիթողություն և այլն | Ռեֆերատ | նոյեմբեր | Քննարկում, մանկավարժական իրավիճակի վերլուծություն: | Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие2010 |
| 8. | Էթնոմշակութային բաղադրիչի հաշվառումը երեխաների դաստիարակության հարցում: | Ազգային արժեքների արժևորումն հայկական ընտանիքում, ազդեցությունը երեխայի դաստիարակության, աշխահրայացքի վրա: | Հետազոտում | նոյեմբեր | Ինքնուրույն ուսումնասիրություն և ներկայացում: | Сидоров А.А.,Иванюженков Б.В.,Карелин А.А.,Педагогика спорта, Учебник для студентов вузов,М.: Дрофа, 2000,320с |
| 9. | Սպորտի դիդակտիկայում ուսուցման անձնակողմնորոշիչ հարացույցը | Ժամանակակից դասավանդման մեթոդներին, ձևերին, մոտեցումներին ներկայացվող պահանջները | Ռեֆերատ | նոյեմբեր | Բանավոր ներկայացում | Ямалетдинова Г.А. Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие2010 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10. | Օլիմպիական կրթության գաղափարի իրագործումը ֆիզիկական կրթության ընդհանուր ոչմասնագիտական համակարգում: | Օլիմպիական կրթության գաղափարի իրագործումը ֆիզիկական կրթության ընդհանուր ոչմասնագիտական համակարգում: | Ռեֆերատ | նոյեմբեր | քննարկում | Тер-Ованесян А.А., Тер-Ованесян И.А. Педагогика спорта. - Киев, 1986. |
| 11. | Սպորտաձևի յուրահատկության հաշվառումը սպորտային դիդակտիկայում մեթոդական տարբեր հնարների օգտագործման ժամանակ: | Սպորտաձևի յուրահատկության հաշվառումը սպորտային դիդակտիկայում՝ մեթոդական տարբեր հնարների օգտագործումը | Ռեֆերատ | նոյեմբեր | Բանավոր ներկայացում | Сидоров А.А.,Иванюженков Б.В.,Карелин А.А.,Педагогика спорта, Учебник для студентов вузов,М.: Дрофа, 2000,320с |
| 12. | Մարդաբանական գործունեությունը սպորտի վետերանների հետ: | Սպորտի վետերանների հետ մարդաբանական գործունեության առանձնահատկույունները | Ռեֆերատ | նոյեմբեր | Բանավոր ներկայացում | Сидоров А.А.,Иванюженков Б.В.,Карелин А.А.,Педагогика спорта, Учебник для студентов вузов,М.: Дрофа, 2000,320с. |

## 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[12]

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | SMART –էլեկտրոնային կարողություններով լսարան |
| Սարքեր, սարքավորումներ | Համակարգիչ, էլ. գրատախտակ, պրոեկտոր |

[12] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

| | |
|---|---|
| Համակարգչային ծրագրեր | Windows, MS office: Power Point, Word, Excel, Google, Adobe Reader, |

**14. Գնահատում**

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[13]:

**14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝**

- ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,
- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

---

[13]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է ստուգարքով:

Ստուգարքով ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:[14]

### 14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

**« Սպորտային մանկավարժություն » դասընթացի ստուգարքի հարցաշար**

1. «Սպորտային մանկավարժություն»–ը որպես գիտաուսումնական դասընթաց. օբյեկտը, առարկան և խնդիրները:
2. Սպորտային մանկավարժության գիտական հիմունքները և աղբյուրները:
3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժության առաջացումը և օբյեկտիվ պահանջներն արդի պայմաններում:
4. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժության կապը այլ գիտությունների հետ
5. Սպորտի, որպես մանկավարժական երևույթի հիմնական հասկացությունները
6. Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեությունը
7. Մարզիչի մասնագիտական գործունեության տեսակները
8. Մարզիչի գործունեության ֆունկցիոնալ տարրերը
9. Ուսումնա-դաստիարակչական գործընթացում մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության իրականացման փուլերը
10. Մարզիչի գործունեության յուրօրինակությունը,պրոֆեսիոգրամը
11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում անձի գործունեության առանձնահատկությունները և մասնագետին ներկայացվող պահանջները:
12. Մասնագետի մանկավարժական կոմպետենցիաները և չափորոշիչները:
13. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներին համալիր մոտեցման խնդիրների իրագործումը անձի ձևավորման հարցում:
14. Դաստիարակության խնդիրների իրագործման յուրօրինակությունը՝ բարոյական, աշխատանքային, մտավոր, գեղագիտական ուղղություններում:
15. Քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները սպորտում և ժամանակակից պայմաններում:
16. Դաստիարակության սկզբունքների և մեթոդների օգտագործման յուրօրինակությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտային դաստիարակության մեջ:

[14] Կիրառվում է կամ առաջին, կամ երկրորդ պարբերությունն ըստ դասընթացի ամփոփման ձևի:

17. Սպորտային դաստիարակության մեթոդների կոնցեպցիան:

18. Համոզման, վարժությունների, խրախուսման, պարտադրանքի, օրինակի, մրցույթի / խաղի/, քննադատության /ինքնաքննադատության/ մեթոդների յուրօրինակությունը և կիրառման առանձնահատկությունները սպորտային դաստիարակության մեջ

19. Ինքնադաստիարակության առանձնահատկությունները սպորտում:

20. Ինքնադաստիարակությունն ապահովող՝ պայմանները, սպորտային մանկավարժի դերը, ինքնավերահսկումը:

21. Մարզիչի դաստիարակչական գործունեության համակարգը

22. Մարզիչի մանկավարժական վարպետությունը

23. Մարզիչի մանկավարժական վարպետության իրագործումը մասնագիտական գործունեության ժամանակ:

24. Սպորտիայն մանկավարժի մանկավարժական տեխնիկայի տարրերը

25. Մարզիչի մանկավարժական տեխնիկայի կարողությունների ձևավորումը

26. Ուսուցման տեխնոլոգիան սպորտում

27. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներում կոլեկտիվ փոխհարաբերությունների յուրօրինակությունը:

28. Անձի դաստիարակությունը ֆիզիկական և սպորտային կոլեկտիվներում:

29. Կոլեկտիվի նշանակությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներում:

30. Սպորտային կոլեկտիվներում նպատակաենթադրման գործընթացի առանձնահատկությունները:

31. Խմբում սոցիալական և սպորտային հարմարման խնդիրները:

32. Սպորտում լիդերության խնդիրը, մարզիկի փոխգործունեությունը սպորտային խմբերի լիդերների և թիմերի հետ:

33. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներին համալիր մոտեցման խնդիրների իրագործումը անձի ձևավորման հարցում:

34. Դաստիարակության խնդիրների իրագործման յուրօրինակությունը՝ բարոյական, աշխատանքային, մտավոր, գեղագիտական ուղղություններում:

35. Քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները սպորտում և ժամանակակից պայմաններում:

- **Ընդգրկված թեմաները.**

1. « Սպորտային մանկավարժություն»-ը որպես գիտաուսումնական դասընթաց. օբյեկտը, առարկան և խնդիրները:
2. Սպորտի մանկավարժության գիտական հիմունքները և աղբյուրները:
3. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժության առաջացումը և օբյեկտիվ պահանջներն արդի պայմաններում:
4. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մանկավարժության կապը այլ գիտությունների հետ
5. Սպորտի, որպես մանկավարժական երևույթի հիմնական հասկացությունները
6. Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեությունը
7. Մարզիչի մասնագիտական գործունեության տեսակները
8. Մարզիչի գործունեության ֆունկցիոնալ տարրերը
9. Ուսումնա-դաստիարակչական գործընթացում մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության իրականացման փուլերը
10. Մարզիչի գործունեության յուրօրինակությունը,պրոֆեսիոգրամը
11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում անձի գործունեության առանձնահատկությունները և մասնագետին ներկայացվող պահանջները:
12. Մասնագետի մանկավարժական կոմպետենցիաները և չափորոշիչները:
13. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներին համալիր մոտեցման խնդիրների իրագործումը անձի ձևավորման հարցում:
14. Դաստիարակության խնդիրների իրագործման յուրօրինակությունը՝ բարոյական, աշխատանքային, մտավոր, գեղագիտական ուղղություններում:
15. Քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները սպորտում և ժամանակակից պայմաններում:
16. Դաստիարակության սկզբունքների և մեթոդների օգտագործման յուրօրինակությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտային դաստիարակության մեջ:
17. Սպորտային դաստիարակության մեթոդների կոնցեպցիան:

- **Ընդգրկված հարցեր.**

1. Համոզման, վարժությունների, խրախուսման, պարտադրանքի, օրինակի, մրցույթի / խաղի/, քննադատության /ինքնաքննադատության/ մեթոդների

յուրօրինակությունը և կիրառման առանձնահատկությունները սպորտային դաստիարակության մեջ

2. Ինքնադաստիարակության առանձնահատկությունները սպորտում:
3. Ինքնադաստիարակությունն ապահովող՝ պայմանները, սպորտային մանկավարժի դերը, ինքնավերահսկումը:
4. Մարզիչի դաստիարակչական գործունեության համակարգը
5. Մարզիչի մանկավարժական վարպետությունը
6. Մարզիչի մանկավարժական վարպետության իրագործումը մասնագիտական գործունեության ժամանակ:
7. Սպորտիայն մանկավարժի մանկավարժական տեխնիկայի տարրերը
8. Մարզիչի մանկավարժական տեխնիկայի կարողությունների ձևավորումը
9. Ուսուցման տեխնոլոգիան սպորտում
10. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներում կոլեկտիվ փոխհարաբերությունների յուրօրինակությունը:
11. Անձի դաստիարակությունը ֆիզիկական և սպորտային կոլեկտիվներում:
12. Կոլեկտիվի նշանակությունը ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներում:
13. Սպորտային կոլեկտիվներում նպատակաենթադրման գործընթացի առանձնահատկությունները:
14. Խմբում սոցիալական և սպորտային հարմարման խնդիրները:
15. Սպորտում լիդերության խնդիրը, մարզիկի փոխգործունեությունը սպորտային խմբերի լիդերների և թիմերի հետ:
16. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներին համալիր մոտեցման խնդիրների իրագործումը անձի ձևավորման հարցում:
17. Դաստիարակության խնդիրների իրագործման յուրօրինակությունը՝բարոյական, աշխատանքային, մտավոր, գեղագիտական ուղղություններում:
18. Քաղաքացիական և հայրենասիրական դաստիարակության առանձնահատկությունները սպորտում և ժամանակակից պայմաններում:

**14.4. Գնահատման չափանիշները[15].**

Տեսական գիտելիքները՝ առավելագույնը 20 միավոր,

[15] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

Սեմինար պարապմունքները՝ առավելագույնը 20 միավոր,

Ինքնուրույն աշխատանքը՝ առավելագույնը գումարային 40 միավոր,

Հաճախումները՝ առավելագույնը 20 միավոր։

1. **Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝**

1.1 ուսումնական գործընթացին ուսանողի մասնակցության աստիճանի գնահատում դասերին հաճախումների հաշվառման միջոցով՝առավելագույնը 20 միավոր,

1.2 գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 20 միավոր,

1.3 ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,

1.4 դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,

1.5 ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր։

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# «Սպորտային մանկավարժություն» դասընթաց

## ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** 011401.00.6 ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** 011401.09.6 **ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ և ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** Մանկավարժության բակալավր
/բակալավր, մագիստրատուրա/

/

Վանաձոր 2023

**Հեռակա ուսուցման համակարգ**

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">ՄՀ/բ-189__ Սպորտային մանկավարժություն</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">3 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">4-րդ տարի, 8-րդ կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">14</td><td>Դասախոսություն</td><td>8</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td>6</td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td>-</td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td>-</td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">76</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">90</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">ստուգարք</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Բացահայտել սպորտային մանկավարժական օրինաչափությունները, սպորտի մասնագետներին զինել այն գիտելիքներով որոնք անհրաժեշտ են սպորտի պարապմունքներին մանկավարժահոգեբանական խնդիրներ լուծելու համար:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.<br>Գիտելիք.<br>• Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության տեսակները,<br>• ուսուցման և դաստիարակության գործընթացի, ֆիզիկական կուլտուրայի ուսուցչի և մարզչի մանկավարժական վարպետության հետ կապված համապատասխան գիտելիքները և գործնական կարողությունները,<br>• Սպորտի, որպես մանկավարժական երևույթի հիմնական հասկացությունները<br>• Մարզիչի մասնագիտական-մանկավարժական գործունեության իրականացման փուլերը ուսումնա-դաստիարակչական գործընթացում,</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | • Սպորտի մանկավարժի գործունեության ֆունկցիոնալ տարրերը,<br>• անձի ձևավորման, նրա ազատության, կյանքի ապահովման պատասխանատվության պայմանները,<br>• Մարզիչի մանկավարժական տեխնիկան<br>• անհատ մարդուն և մարդկանց խմբերի կազմակերպման և կառավարման հոգեբանամանկավարժական միջոցները, մեթոդներն ու ձևերը,<br>• բնակչության ֆիզիկական դաստիարակության սկզբունքներն ու մեթոդները:<br>**Հմտություն.**<br>▪ ձեռք բերած տեսական գիտելիքները՝ խոսքի տիրապետման և հաղորդակցման մշակույթը կիրառել գործնականում,<br>▪ համեմատել բարձրագույն նվաճումների սպորտի պարապմունքների կառուցման և անցկացման տարբերությունը մասսայական սպորտի համեմատությամբ,<br>▪ սպորտային դաստիարակության ոլորտում որոշել ընդհանուր և կոնկրետ նպատակներն ու խնդիրները,<br>▪ որոշել և փաստարկված ներկայացնել անձնական վերաբերմունքը մանկավարժության բանավեճային խնդիրներին, կատարել ինքնուրույն եզրահանգումներ:<br>**Կարողություն.**<br>▪ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի հաջողությունների ոլորտում ինֆորմացիայի հավաքման, ընդհանրացման, և օգտագործման մեթոդներին և միջոցներին,<br>▪ բազմամշակութային միջավայրի պայմաններում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում գործունեության սուբյեկտների հետ շփումներ հաստատելու և փոխգործունեություն ապահովելու ձևերին, հետազոտության մեթոդներին:<br>▪ ավանդական և ոչավանդական միջոցների, մանկավարժական դաստիարակչական մեթոդներին:<br>▪ Դաստիարակության խնդիրների իրագործման յուրօրինակությանը՝ բարոյական, աշխատանքային, մտավոր, գեղագիտական ուղղություններում:<br>▪ Մարզիչի մանկավարժական տեխնիկայի կարողություններին, մարզիկների մանկավարժական տեխնիկայի կարողությունների ձևավորման մոտեցումներին: |
| **Դասընթացի բովանդակությունը** | **Թեմա 1**«Սպորտային մանկավարժություն»-ը որպես գիտաուսումնական դասընթաց. օբյեկտը, առարկան և խնդիրները: **Թեմա 2** Մարզիչի գործունեության յուրօրինակությունը,պրոֆեսիոգրամը **Թեմա3** Դաստիարակության սկզբունքների և մեթոդների օգտագործման յուրօրինակությունը ֆիզիկական կուլտուրայի և |

| | |
|---|---|
| | սպորտային դաստիարակության մեջ: **Թեմա 4** Մարզիչի դաստիարակչական գործունեության համակարգը: **Թեմա 5** Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներում կոլեկտիվ փոխհարաբերությունների յուրօրինակությունը: **Թեմա 6** Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պարապմունքներին համալիր մոտեցման խնդիրների իրագործումը անձի ձևավորման հարցում: **Թեմա 7** Ուսուցման տեխնոլոգիան սպորտում: Վերբալ և ոչխոսքային հաղորդակցում: Խոսքի տեխնիկայի ձևավորում: Մարզիչի մանկավարժական տեխնիկայի տարրերը:**Թեմա 8** Հոգեկան վիճակների ինքնակարգավորում:**Թեմա 9** Մարզիչի մանկավարժական գործունեության համակարգը **Թեմա10** Մանկավարժական վարպետության բաղադրամասերը |
| Գնահատման մեթոդները և չափանիշները | **Տեսական գիտելիքները**՝ առավելագույնը 20 միավոր,<br>**Սեմինար պարապմունքները**՝ առավելագույնը 20 միավոր,<br>**Ինքնուրույն աշխատանքը**՝ առավելագույնը գումարային 40 միավոր,<br>**Համախումները**՝ առավելագույնը 20 միավոր: |
| Գրականություն | **Պարտադիր**- 1. Ямалетдинова Г.А. ,Педагогика физической культуры и спорта, Курс лекций, Учебное пособие,Екатеринбург, Издательство Уральского университета, 2014,350 с.<br>2. Сидоров А.А.,Иванюженков Б.В.,Карелин А.А.,Педагогика спорта, Учебник для студентов вузов,М.:Дрофа, 2000,320с.<br>3. Тер-Ованесян А.А., Тер-Ованесян И.А. Педагогика спорта. - Киев, 1986.<br>4. Основы педагогического мастерства: Учеб, пособие для 0-75 пед. спец. высш. учеб. заведенннй/И. А. Зязюн, И. Ф. Кривонос, Н. Н. Тарасевич и др.; Под ред. И. А. Зязюна.— М.: Просвещение, 1989.— 302 с.<br>5. В.Г. Крысько Психология и педагогика в схемах и таблицах, Минск, Харвест, 1999, 376с.<br>**Լրացուցիչ**-Բաբայան Հ.Ա Դպրոցականների զեղագիտական դաստիարակությունը ֆիզիկական դաստիարակության գործընթացում, Երևան, Լույս, 1987 |